





Ե. ԳՈՒԱՆՃՅԱՆ

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆՅԱՆ

(Հ ու շ ե Ր և ն ո թ ե Ր)



Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը մեր ազգային-եկեղեցական նորագույն պատմության մեջ ամենախնամախոս և կարկառուն գեմբերից մեկն է իբրև բազմահմուտ եկեղեցական, վարչագետ հոգևորական և բազմաբեղուն մատենագիր:

Օրմանյան տասը զավակներու տեր հոռմեաղավան դեղագործ Օրմանյան Անտոնի որդին էր: Ան ծնած է 1841 թվականի փետրվարին: Ստացած է կաթողիկ կրթություն և պայքարելով պապի «Ռեվերսուս» կոնդակին դեմ, որիչ 40 հայ կաթողիկե հայրենասերներու հետ 1879-ին վերադարձած է Մայր եկեղեցիի ծոցը, հարազատ ժողովուրդին գիրկը: Կոստանդնուպոլսո հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանի պատկերավոր և գեղեցիկ բացատրությամբ ըսած՝ «Հոռմին ապարանք բողոցիք և հայուն հյուպար եկաք: Հոռ հյուս էիք, հոս տանուտեք էք, այն անքը չէք, այս անքն էք»:

Օրմանյան Հայ եկեղեցվո նշանավոր գեմբերեն մին հանդիսացավ որպես մեծ վարդապետ, բազմակողմանիորեն կրթված ուսուցիչ և խորաթափանց գիտնական: Դեռ 1868-ին ան atto publi-ստ կոչված հրապարակային մեծահանդես քննություններու ժամանակ փիլիսոփայության, աստվածաբանության և եկեղեցական իրավունքի մագիստրոսի գիտական աստիճան էր ստացել:

Հայ եկեղեցիի գիրկը դառնալեն հետո Օրմանյանի առջև կրացվի ազգային-եկեղեցական գործունեության ընդարձակ ասպարեզ իբրև առաջնորդ, ուսուցիչ, Արմաշի նորաբաց Դպրեվանքի վանահայր և ապա Կոստանդնուպոլսո պատրիարք:

Օրմանյան սրբազան իր վարչական ընդունակությունները հանգես բերավ իբրև վարչագետ եկեղեցական իր Կարնո առաջնորդության տարիներուն: Ան իր շուրջը ստեղծեց համակրանքի մթնոլորտ և կրցավ իր ողորդող համոզվելի լեզվով արձակել տալ հայ քաղաքական բանտարկյալները: Տարի մը էջմիածնի Գևորգյան ճեմարանին մեջ Մակար Կաթողիկոսի հրամանով իբրև աստվածաբանության ուսուցիչ պաշտոնավարելն վերջ մեկնեցավ Կոստանդնուպոլիս, ուր նշանակվեցավ ուսուցիչ Ղալաթիո Կեդրոնական Վարժարանին մեջ, և իբրև քարոզիչ՝ Ղալաթիո եկեղեցիին և հետո ալ Բերայի Ս. Նրբորդություն եկեղեցին:

1878-ին Արմաշի վանքին տեսչության կոչվեցավ, գործակից ունենալով Դուրյան Նզիշի վարդապետը: Օրմանյան մնաց հոռ յոթ տարի՝ մինչև 1886 հուլիս, և նույնմեքին Կոստանդնուպոլսո պատրիարք ընտրվեցավ:

Մեծ է Օրմանյանի դերը Արմաշի դպրեվանքը վերստին կազմակերպելու գործին մեջ: Արմաշի դպրեվանքին մեջ, Օրմանյանի և Դուրյանի շունչով, Հայ եկեղեցվո պատիվը

բարձր պահող կարգադրման եկեղեցականներու շարք մը հասաւ, ինչպէս Մեծի Տանն Կիլիկիոյ աթոռակից կաթողիկոս Բարդէն Կյուլեներյան, Կոստանդնուպոլսոյ երբեմնի պատրիարք Զավեն արքեպիսկոպոս Նղիայան, Նորասողեմի պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյան, նահատակ առաջնորդներ՝ Սմբատ եպիսկոպոս Սաատեթյան, Խոսրով

Հատովկ ուշադրութեան արժանի է Օրմանյանի՝ Կոստանդնուպոլսոյ պատրիարքութեան պաշտոնավարութիւնը 1886—1908 թվականներուն: Այդ տարիները Օրմանյանի պատրիարքութեան փոթորկալի տարիները եղան: Օրմանյան ունէր իրեն հատովկ վարչագիտութիւն, բայց ազգային-եկեղեցական հարցերուն մեջ ան մասամբ կշարունակէր Ներսէս



Մաղափա արքեպիսկոպոս Օրմանյան

եպիսկոպոս Պեհրիկյան, Գնել եպիսկոպոս Գալեմբյարյան և ուրիշներ: Օրմանյան պատրիարք ընտրվելէն հետո ալ կշարունակէր իր բարոյական աջակցութիւնը բերել Արմաշին. ինքն էր, որ Նպաստից սնտուկէն ամսական 2.000 դահեկանի գումար մը հատկացուց Արմաշին:

Վարժապետյան պատրիարքի քաղաքականութեան գիծը:

Օրմանյան իր պատրիարքութեան փոթորկալի շրջանին մասին կգրէ.

«Նախորդ պատրիարքներէն Աշըգյանը չափազանց կակուղ և Իզմիրլյանը չափազանց պինդ նկատված ատեն, երրորդին կմնար

(այսինքն՝ Օրմանյանին) — Ե. Գ.) երկուքն խառն ընթացք մը գործածել, որ է երկու կողմերն ալ շոշափել և այս եղած էր ընտրողներուն ալ տեսությունը...»¹

1894—1908 թվականները համիզդան բռնադատության տարիները եղան և Այդ օրերուն Օրմանյանի քաղաքականությունը եղավ «հնարավոր չափի մեջ բռնությունները մեղմացնել, սպառնացող նորանոր վտանգները հեռացնել, հարստահարությունները չափավորել, տեղի տանցած վնասները դարմանել, և ազգին հարվածյալ և վիրավորյալ վիճակին կազդուրման միջոցներ հոգալ։ Իսկ մյուս կողմեն շատ առաջ չեմք զիջումներու մեջ, այլ ազգային իրավունքներու ավանդը պաշտպանել, ազգային դատին պատկանող սկզբունքները չլուծարել։ Իսկ դիմումներու ձևին գալով այնպիսի տե՛ մը գործածել, որ բլլա երկու ժայրերը միանգամայն նկատի առնող, հանդարտությամբ և խոհմտությամբ գործերը վարող, հնարավորը բացարձակին նախադասող, հարվածյալ ազգին վրա նոր հարվածներ չհրավիրող (ընդգծումը մերն է) — Ե. Գ.), մեկ խոսքով լատին առածին հետևողությամբ գործին ուժեղ, կերպին համեղ վարմունք մը»²։

Այս բոլորի հիման վրա Օրմանյան իր հեռատեսությամբ կուսակցականները «կզդուցաներ, թե ազգը վիրավորված և հարվածված և շատ աշուճ կորսնցուցած և տկարացած հիվանդ մըն է, որուն վրա անհնար է սաստիկ դեղեր և բուռն ցնցումներ փորձել և ոչ ալ անոր մարմենն արյուն հանելու համարձակություն ունենալ։ Հիվանդը ամեն կողմեն հանդարտության պետք կհայտնեն և կպահանջեն, այլապես գործել հնարավոր չէ»³։

1897 թվականի օգոստոս 6-ի արկածալից ցույցեն հետո սկիզբ կառնեն կուսակցականներու թշնամությունը գեպի Օրմանյան և «Այդ կացությունը շարունակեց մինչև Օրմանյանի պատրիարքության վերջը. և Օրմանյան իսկապես սալին ու մուրճին մեջ տեղը մնացող երկաթին դերը վարեց, մեկ կողմեն սալին պնդության և մյուս կողմի մուրճին ելե՛լքներուն հարվածները կրելով»⁴։ Բայց հակառակ անրարենպաստ պայմաններուն, Օրմանյան պատրիարք արդյունավետ գործունեություն մը ունեցավ։ Ան զեռնոր պատրիարք ընտրված՝ 1.200-ն ավելի բանտարկյալներու ներում շնորհել տվավ և 30 մահվան դատապարտվածներուն պատիժը բանտարկության փոխել տվավ։ Կա-

րոտ և ուսումնասունը տողմեն 35 հոգի դանազան պետական վարժարաններ դեռնողներ հրաման առավ արքունիքին։ Կոստանդնուպոլսո Ազգային հիվանդանոցին հատկացված պարենը իր շանքերով եռապատկվեցավ։ Գալֆայան որբանոցը ընդարձակել տվավ հարակից պարտեզներով։ Կարոտյալներու, այրիներու և որբերու համար հանդանակել տվավ 83.000 հնդեռ ոսկի և այս նպաստի գումարով Արևմտյան Հայաստանի զավառներուն մեջ քառասունն ավելի գյուղական վարժարաններ բանալ տվավ։ Այս բոլոր ազգանվեր գործունեությունն զատ, Գումգալիսի Պատրիարքարանը, Մայր Նիկեղեցին և մայրաքաղաքի բազմաթիվ այլ եկեղեցիները նորոգել տվավ։

Օրմանյան սրբազան իր երկտասարդությունն մինչև խոր ծերությունը — ապրած է 77 տարի — համակ գործունեություն և շարժում է եղած։ Ճամբորդած է շատ երկիրներ՝ Իտալիա, Հունաստան, Եգիպտոս, Գերմանիա, Ֆրանսա, Բելգիա, Արևմտյան և Արևելյան Հայաստան, Կոստանդնուպոլիս, Նրուսադեմ, Գամասկոս և այլ երկիրներ ու քաղաքներ, խորացնելով իր հմտությունն ու աշխարհաճանաչողությունը։

Ինչպես Արևմտյան Հայաստանի ամեն անկյունները, Տրապիզոնն ու Սամսոնն ալ միասին, Արևելյան Հայաստանի մեջ ալ Օրմանյան սրբազան անկոխ չէ թողած ոչ մեկ կաթոլիկ պատմական վայր։ 1886-ին Գարեգին վարդապետ Սրվանձտյանցի հետ Օրմանյան իր եպիսկոպոսական ուխտագնացության և ձեռնադրության առթիվ ամբողջությամբ կշրջադալի պատմական Հայաստանը։ Ինչպես կերևի, Օրմանյան անխոնջ ուղևոր մը և եռանդուն գործիչ մը եղած է։

Մեծ և պատկառելի է եղած Օրմանյանի գրական, պատմա-բանասիրական, աստվածաբանական վաստակը։ Հակառակ անոր, որ իր կյանքի մեծ մասը անցուցեր է վարչական պատասխանատու և ժամանակ խլող աշխատանքներու մեջ, ախուսմենայնիվ կարողացած է մեզ թողուլ գրական պատկառելի, մեծարժեք ժառանգություն մը։ Օրմանյանի ձգած պատմական և բանասիրական մեծարժեք վաստակն ալ բավական է, որպեսզի այս ասպարեզին մեջ ևս զինքը դասենք մեր ականավոր մտքի և գրչի մշակներու, մեր վաստակավոր մատենագիրներու շարքին։ Հակահասունյան խնդրին շուրջ հրատարակված է 6 անուն աշխատություն ֆրանսերեն և իտալերեն լեզուներով 1870—1873 թվականներուն։ 1870—1880 թվականներուն հրատարակված են իր ավելի քան 9 անուն բանաստեղծությունները՝ «Հայուն անցյալը, ներկայն և ապագան», «Հայության հոգին», «Միություն հայության».

1. «Ազգապատում», հրքորդ հատոր, էջ 5080.

2. Նույնը, էջ 5083.

3. Նույնը, էջ 5088.

«Հայ ազգություն», «Կարոտ եմք», «Հայ երիտասարդություն» և այլն: Իր կարևորագույն ուսումնասիրություններն են «Միսական բառարան»-ը, «Էջմիածին», «Վատիկանը և հայերը», «Հայոց եկեղեցին», որ լույս է տեսած հայերեն ավելի քան 4 անգամ, թարգմանվելով նաև ֆրանսերեն, անգլիերեն և ռուսերեն լեզուներով, «Համապատում», և հատկապես՝ իր գլուխգործոցը հանդիսացող «Ազգապատում»-ի երեք հատորները և իր մահեն վերջ նրուսադեմ հրատարակված իր վերջին գործը՝ «Խոհք և խոսք», որ շատ շահեկան ինքնակենսագրություն մըն է:

Որքան կհիշեմ, դեռ ձեռագիր կմնա Օրմանյանի «Պատմություն Արմաշու» աշխատությունը, որ ցանկալի է շուտով հրատարակված տեսնելու:

Իրեւ բաղադրակա և վարչագետ Օրմանյան շատ իրապաշտ (ոնախատ), հեռատես միտք մըն է և ունի ճշգրիտ ճանաչողություններ և գնահատումներ կյանքի և աշխարհի մասին: Անցյալին համար կպնդե, թե մերինին նման փոքր ազգ մը պետք չունի բնավ 4—5 կուսակցություններու: Մենք պետք ունենինք միայն ինքնապաշտպանության ընդհանուր միություն մը, ինչպես անցյալ դարուն սկիզբը տնեին հույները, սարսելու համար թրքա-

կան բռնակալ լուծք, պատանիններն և կիններն մինչև ծերերը, միության մը, որ պաշտպանեք հայ ժողովուրդը անոր կյանքին, ինչքին և պատիվին վնաս հասցնողներն: Ան արդարացի կերպով կքննադատե եվրոպական պետություններու շահամտությունը և մեր բաղադրական կուսակցություններու միամտությունը, որով անոնք հայկական հարցի լուծման մեջ մեծ հույսեր կապեցին եվրոպական մեծ պետություններուն: «Աշխարհի շահնաճը միայն Շահն է», — կեզրակացնե Օրմանյան և կավելցնե. «Մինչև որ հայտնապես չցուցվի կամ շտեպնվի, որ Անգլիա և Ֆրանսա Հայաստան մը կազմելու կամ Հայաստան մը բարվոքելու մեջ իրենք օգուտ մը չունին, ո՛չ խոսքերուն հնար է հավատալ և ոչ խոստումներուն վստահիլ»:

Մեր փրկությունը ուրեմն մեր մեջ էր և ոչ թե խորամանկ և շահամոլ եվրոպայի մեջ, այլ այն պայծառ և ուժեղ գիտակցության մեջ, որով Արուսեաններ, Նալբանդյաններ, Շահումյաններ, Սպանդարյաններ, Մյասնիկյաններ, Միկոյաններ ճամբա բացին դեպի Սովետական Ռուսիան, որ ամենուն սնունդ և լույս կշռայլե, որ կճանչնա ամեն ազգի գոյության իրավունք անխտիր:

